

Սենամարտութիւններն ու ամէն տեսակ վրէժխնդրութիւնները անվայել խենթութիւններ են : Սրակալութիւնը հպարտութեան ու ցածութեան խառնուրդ մըն է : Քեզի դէմ եղած անիրաւութեան մը ներելով՝ կրնաս թշնամիդ բարեկամ դարձնել, աւրուած մարդը ողիւղ մտածութեան գարձընել : Ո՛հ, ինչ գեղեցիկ ու մխիթարական յաղթանակ է աս յաղթանակը . որչափ աւելի մեծ ու գերազանց է քան թէ վրէժխնդրութեան սոսկալի յաղթանակները :

Եւ թէ որ քեզի դէմ անիրաւութիւն ընող ու քեզմէ ներումն գտնողը անհատելի մնայ, ու զքեզ նախատելով ապրի ու մեռնի, դուն աղէկ ըլլալովդ ինչ կորսընցուցիր : Ինքզինքդ վեհանձնութեան մէջ պահելու ուրախութիւնը ձեռք ձգեցիր, որ ամէն ուրախութեան վեր է :

ՓԷՂԼԻՔՈՅ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԼՈՆՏՐԱՅԻ ՄԷՉ ԱՌԱՒՕՏ ՄԸ

ԿԱՄ

ՊԱՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿՈՐԾԱՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ 1

ԸՆԱ Ընդդիմ ժողովրդեան մտաց հիմակուան երևոյթը օտարականի մը առջև : Բայց ինչ է այս հանդարտութեան ու կերպարանափոխութե պատճառը, որ հարևանցի մը դիտողին աչքը չի կրնար նշմարել . և ինչպէս կրնանք մենք Վաղղիացիք՝ մեր հիմակու վիճակին վրայ յարմարելով՝ ի գործ դնել : Բստ իմ կարծեացս, ահա պատճառն և ահա գործադրութիւնը :

Վաղաքական պատերազմներուն առջևն առնող սահմանադրութիւնները՝

1 Տես երես 326 :

ոչ այնչափ կառավարութեան կերպերէն ու գործքերէն կախումն ունին, որչափ ընկերութեան իր մտքէն ու գործքերէն : Ըստ խօսքէն կը հասկըցուի, որ ընկերական հիւանդութի մը՝ միայն ընկերական դեղով մը կրնայ բժշկուիլ : Ըստ ընկերական դեղը գտնալը և ի գործ դնելը՝ ամենէն աւելի դարձեալ ընկերութեան կը վերաբերի . կառավարութիւնները միայն քաջալերութի կրնան տալ այս կողմէն իրենց յանձնուած մարդկային ընկերութիւններուն :

Արեմն հարկ էր Ընդդիմական ազգին ալ, որ իր գրեթէ հասարակապետական կառավարութեան քաջալերութեամբ՝ ինքիրմէն փնտռէ ու գտնայ իր 1822^{ին} ու 1830^{ին} ունեցած խուլ ու երբեմն սաստիկ հիւանդութեան դեղերը :

Ընդդիմ ըրածն ալ այս եղաւ : Ըստ շահախնդիր, ուշիմ ու ազատ ազգը՝ հասկընալով որ պիտի կորսուի կամ մաշի, ըսաւ ինքն իրեն . Ըգատենք ինքզինքնիս, ու ազատեց : Իր նեղութիւններուն ու մաշելուն պատճառները քննեց . հասկըցաւ որ գլխաւոր պատճառը ուրիշ բան չէր, եթէ ոչ իր ազգատներուն լքեալ վիճակը, բարոյական զծծութիւնը, տգիտութիւնը, թշուառութիւնը և գրգռութիւնն էր : Հասկըցաւ, որ իր բարձրագոյն կարգերն, անձնասիրութեամբ ու խստասրտութեամբ՝ ստորին կարգաց վիճակին ա. մենեւին հոգ չի տանելով ու անոնցմէ երես դարձունելով, տառապանաց, ամբաստանութեանց ու ռիսակալութեանց լեւներ իր վրայ կը դիզէին, որոնք օր աւուր ժողովրդեան տրտունջներովն ու սպառնալիքներով լցեալ քաղաքական ամպեր պիտի ըլլային : Այսաւ ծեծել իր կուրծքը, որ երկու կերպ զգացմամբ շարժեալ էր, այսինքն անձնական օգտի և կրօնի զգացմամբ, որ մարդոց մէկմէկու ունեցած պարտաւորութեանց ամենէն խորինն ու գլխաւորն է : Օարկաւ իբրև Սոլսեսի գաւազանովն իր շատոնցմէ ի վեր քարացեալ սրտին, և իր

զրկեալ կարգացը համար փրկաւէտ խորհուրդներու , բարի գործքերու և քրիստոնէական ողորմութեան աղբիւր մը բոլորեցուց : Այս սպասեց կառավարութեան միշտ դանդաղ ու դժուար գործադրութեան , անանկ երկրի մը մէջ , ուր աւանդութիւնը օրէնքի տեղ բռնած է : Ինքը ձեռք զարկաւ գործքի մասնաւոր ընկերակցութիւններու կամ մասնաւոր մարդոց միջոցով : Բսաւ , Ուղղէնք այս մասնաւորական կամ միաբանական ազատ ու յօժարական գործքերով՝ մեր քաղաքական սահմանադրութեան պակասութիւնները և մեր կառավարութեան վարանմունքները : Բնակ մտածեց ու մտածութիւնը գործի դրաւ : Այսաւ քալել առանց հոգ ընելու , թէ կառավարութիւնը շուտ կամ ծանր իր ետեւէն կ'երթայ արդեօք . սակայն առջուց գիտէր անտարակոյս , որ իր օրինակին և ընդհանուր կարծեաց ուժովը՝ կառավարութիւնը այս փրկաւէտ ճամբուն մէջ պիտի մտնար : Այս իրաւցընէ կառավարութիւնն իր ետեւէն քաշեց տարաւ : Ինչպիսի ճշմարիտ քաղաքագէտները՝ ազգային ժողովոց բեմերը գովեցին այս ընկերութիւններ հաստատելու ջանքը՝ ժողովրդեան վիճակը լաւցընելու համար , և օգնութեան իրեն անանկ միջոցներով , որ կը ծառայէին շինութեան , կրօնի , արդարութեան , ուղղութեան , հարստութիւնը աւելի լաւ կերպով տարածելու և նուաստացեալ ժողովրդեան մտաց , հոգւոյ և մարմնոյ թշուառութիւններուն աւելի ընդարձակ կերպով օգնելու : Ինչպիսի ունեւոր կամ կառավարող մասին այս ընդհանուր շարժմունքէն ետ մնացին միայն քանի մը հին ու խստասիրտ ազնուականներ , և անոնց կողմը բռնող քանի մըն ալ զգացմունք ու գաղափար չունեցող գրիչներ . անանկ մարդիկ , որ ինչպէս մեր մէջն ալ , ամէն բանի դէմ կենալը՝ բուն կառավարութեան հոգին կը կարծեն :

Այդ այս քսան տարուան խորհրդածութիւններուն , մտածութիւններուն ,

քննութիւններուն ու ժողովրդեան այլ և այլ կարգերը մէկմէկու հետ սիրով կապելու ջանքերուն ատենը՝ ինչ ըրին ընկերութիւններն ու կառավարութիւնը՝ այս պահանջողական ընկերակաշնութեան համար , այսինքն չափազանց հարստութիւններուն ու չափազանց թշուառութիւններուն մէջ հաշտութե դաշնադրութիւն մը ընելու համար . և ինչպէս այսչափ քիչ ատենի մէջ՝ հարուստ , արուեստագէտ , վաճառական կամ աղքատ մասերուն վարմունքին կամ սրտին մէջ եղած վախերն ու ատելութիւնները կրցան փարատել , ու հաստատել այս սէրն ու միաբանութիւնը , այս ընտանեկան և միաբանական հոգին , որ այս օրուան օրս մտադրութե նայողին աչքին կը զարնէ : Այս ալ չէի գիտեր . բայց մէկ մարդ մը , որ ոչ ազնուապետական է , ոչ ռամկապետական՝ ոչ հարուստ և ոչ աղքատ , ոչ բարձրագոյն կարգաց գոռոզութիւններով թրմած և ոչ ստորին կարգաց նախանձովը աւրուած . այլ միջակային , վասն որոյ և չէզոք մարդ մը , Ինտրայի հասարակ ու աննշան քաղաքացի մը որ ժրջանութեամբ համեստ արհեստ մը գործելով կ'ապրի , Բաւլամէնդին և լրագրաց քաղաքական կուսակցութիւններէն բոլորովին հեռու , և միայն Բատուծոյ կամացը համեմատ կը փափաքի և կը ջանայ իր երկրի ժողովրդեան աղէկութիւնը փնտռելու ճանչնալու և հետեւելու , որոնց ամենուն ալ շահը մէկ կը համարի իր մտքին մէջ , և ամէնն ալ մէկ սիրով կը սիրէ . այս մարդը , որուն անունը չեմ ուզեր տալ , որովհետեւ իր անունը մարդ չի ճանչնար բաց ՚ի իւր թաղը գտնուող աղքատներէն , այս մարդը , կ'ըսեմ , առտու մը ձեռքը գիրք մը եկաւ գտաւ զիս ու ըսաւ . « Բայ օրդ ինձի նուիրէ : Բուն քու երկրիդ մէջ աշխատեցար մեծ յեղափոխութիւն մը չափաւորելու , խաղաղելու և ուղղելու : Այս ալ կ'ուզեմ այսօր քեզի ցուցընել թէ ինչպէս յեղափոխութեան մը առջևը կ'առնուի » : Բայ խօսքը զրուցած

ատենը , ժպտելով մատը կը զարնէր ձեռքը բռնած պզտի գիրքին : “ Ետ
 ,, ըսաւ , ըսի , ես ալ քեզի պէս յեղափո-
 ,, խուածիւնները չեմ սիրեր , որչափ որ
 ,, յեղափոխուածիւն ուզողներուն կար-
 ,, զը սեպուած ալ ըլլամ . բայց ինչ
 ,, գիրք է այդ , որ պզտի գանձի մը պէս
 ,, մատուրներուդ մէջ սխմեր ես : — Ես
 ,, գիրքը , ըսաւ , իրաւցընէ գանձ մըն է ,
 ,, անգին գանձ մը Եծին Իրիտանիոյ
 ,, համար , վասն զի խաղաղութեան և
 ,, պահպանողութեան գանձ մըն է .
 ,, կեցի , ցուցընեմ , : Ես ըսելով գիր-
 ,, քը բացաւ , տեսայ , որ վրան դրուած
 էր խոշոր գրերով . “ Ենտրայի ողոր-
 ,, մածութիւնները , : Ես գիրքը մեր
 ,, առաջնորդն ու մեկնիչը պիտի ըլլայ
 ըսաւ , ու դուրս ելաւ :

Ես ալ ետեէն գացի . ու հայտ-
 Իառք ըսուած ծառաստանին մէջէն
 երթալով՝ սկսանք համառօտ կերպով
 խօսիլ , ինչ որ քսան և հինգ տարուրնէ
 ՚ի վեր կառավարութեանը կամ կրօնա-
 կան , քաղաքական և մասնաւոր ընկե-
 րութիւններն ըրին ազատութեան հա-
 մար , այլ և այլ կարգաց օր ըստ օրէ
 հաւասարութեանը համար , արդարու-
 թեան համար , ստորին կարգի ժողո-
 վըրդեան կրթութեանը , բարուց ուղ-
 ղութեանը և անոր նեղութիւնը սփո-
 փելու և վիճակը լաւցընելու համար ,
 թէ Ենտրայի , թէ բոլոր Ենգլիոյ և
 թէ գաղթականներուն մէջ : Եսնք ա-
 մէն մէկը գրեթէ ժողովրդեան այլ և
 այլ կարգերը մէկմէկու հետ հաշտեցը-
 նելու և միաբանելու համար մէյմէկ
 պայմանագիր էին , որոնցմով միայն մեր
 ազմուկներն ու վէճերը կրնան վախճան
 գանալ : Ես ալ միտքս կը բերէի Ենգ-
 ղիոյ վերջին կառավարութիւններուն
 ըրած նախատեսութեան ու արդարու-
 թեան քանի մը մեծ գործքերը , զորոնք
 ազնուականաց յամառեալ մասը շնոր-
 հոփս կը կոչէ , բայց կենցաղապէտ և
 բարի մարդիկ՝ Բարձր և սորբ քաղաք-
 փոփոխութիւն կ'անուանեն :

Եսմերով քալեցինք՝ բոլոր տեսած-
 նիս՝ հոյակապ պալատներ էին , որոնք

աչքէ կ'անցընէինք ամէն մէկուն վրայ
 զատ զատ զմայլելով : () քստրը բ-
 սուած փողոցին ծայրէն սկսելով ու
 Վէյնզինկգընի բլուրէն անցնելով , մայ-
 րաքաղաքին արեւմտեան կողմի ներսի
 անտառներուն բոլորէն պտոյտ մը ըրինք ,
 ու նոյն պալատները քաղաքին հիւսի-
 սային կողմն ալ տեսանք , որոնց ծայրը
 աչք չի հասնելու կերպով կ'երթայ մին
 չև Իէլ(Ե) և Երիֆընդ-Երիֆը կը
 հասնի . Ենայ , հոյմայեցոց , Գա-
 թացոց , Ենետկեցոց և Գենովա-
 ցոց ճարտարապետութեամբ շինուած
 պալատներ , սուր գմբէթներով , վան-
 դակասիւններով , ատամնաձև որմերով ,
 կամարներով , վանդակապատ պատը-
 գամբներով , որը ազիւսէ , որը քարէ ,
 որը մարմարիոնէ , կամ ասղնեգործի
 պէս բանուած , կամ գերեզմանի քարե-
 ըու պէս միաձոյլ , ուր կարծես թէ քա-
 րերը մոգական զօրութեամբ մը հնա-
 զանդեր են ճարտարապետին մատիտին
 կամ տիրոջը երեւակայութեանը : Ես
 տուններուն ամէնն ալ , մեծ ու պզտիկ ,
 շաղապատող բոյսերով զարդարուած
 են , անանկ որ իրենց արաբացի ձևով
 վանդակապատ պատշգամբներուն քան-
 դակներուն մէջէն փունջ փունջ գեղե-
 ցիկ ծաղիկներ կախուած են , որպէս
 թէ տանը պատերն ու ներսի դատիկոն
 ներն ու սենեակներն անգամ կանանչ
 կը բուսցընեն : Եմէնն ալ իրենց ետեի
 կողմը մարգագետին մը ունին , որուն
 կանաչին գեղեցկութեանն ու թափ-
 շանման փայլունութեանը չեն կրնար
 հաւասարիլ () միւսնիոյ գորգերը : Ե-
 մէնն ալ իրենց պարտէզին մէջ քանի մը
 մեծ կաղնիներ ունին , որ իրենց լայնա-
 տարած ճիւղերը կը տարածեն դէպ ՚ի
 իրենց հիւսիսաբնակ տիրոջը բնակա-
 րանը : Եմէնն ալ իրենց առջև պղնձէ
 կամ մարմարիոնէ վանդակասիւն ունին .
 որ դուրսի սանդուխին տակի գեղեցիկ
 պզտի դալարավայրը կը շրջապատեն ու
 միանգամայն դուրսի ձայներն ու փողո-
 ցին փոշին կը հեռացընեն հարուստին
 լռիկ բնակարանէն : Եմէնուն ալ պա-
 տուհանները կը շողջողան անբուռ բիւ-

րեղներով, որ ապակիի տեղ գործածուած են և ամենաբարակ պղնձէ ոսկեգօծ թելերու մէջ անցուած են, որոնք բիւրեղէ ալիքներու պէս կը ցոլացընեն հիւսիսային արևուն աղօտ և սակաւատեսիլ ճառագայթները:

Սիտքս կը ճնշուէր այս ամբաւ հարստութիւններուն, անգործ դրամագլուխներուն ու ծախուած եկամուտներուն շեղակոյտին տակը, որ այս անթիւ պալատներուն և անոնց անհաշուելի կահ կարասիքներուն և զարդերուն վրայ կը տեսնայի. որովհետև այս պալատներուն ամէնն ալ զարդարուած են բեհեզներով, մարմարիոններով, պղինձներով, մահոններով, ասիական գորգերով, պատկերներով, հայելիներով ու արձաններով: Արծես թէ անհուն դրամագլխի երազ կը տեսնէի: Ար քալէի լուծեամբ ու պարապ տեղը կը ջանայի թուով հաշուելու այն անբաւ միլիոններն ու երկմիլիոնները, որ քսան և հինգ տարուան միջոցին՝ միայն Անտրայի մէջ շինուած շէնքերուն վրայ կը տեսնուին հաշիւ ընողի մը աչքին: Արևակայութեանս ուժը կը կրտրէր:

Արջապէս դարձայ առաջնորդիս ըսի. — «Այս քաղաքը թագաւորներու քաղաք է: Սակայն քու գիրքդ որչափ պէտք է մեծ ըլլայ, և որչափ բարերարութիւններ պէտք է մէջը նշանակուած ըլլան, որ հաւասարակշուութիւն մը կարենայ գտնուիլ՝ այսչափ պերճութեան ու այնչափ կարօտութեան մէջ, այսչափ ճոխութեան ու այնչափ թշուառութեան մէջ:

Ինքը այս խօսքիս չորս բառով պատասխան մը տուաւ ժպտելով ու ցուցամատը շրթունքներուն վրայ դնելով: — «Աեցի, ըսաւ, այդ պերճութիւնը աշխատութենէ զատ ուրիշ բան չէ» ու ետևէն ըսաւ: — «Արճութիւնը լաւ մը աչքէ անցընելէդ ետքը՝ զքեզ աշխատութեան կեդրոնը պիտի տանիմ, որպէս զի վայելող հարստութիւնը տեսնելէդ ետքը, նոյն պերճութիւնը հաստող հարստութիւնն ալ տեսնես:

— Իայց այս վայելքին ատենը, ըսի տառապեալ ու քրտինքին մէջ թաթխուած ժողովուրդ մը չանցնիր փողոցէն, որ այս պատերուն և աս ճոխութեան վրայ նախանձու կամ ատելութեան աչքով մընայի, որով կենաց երջանկութիւնը կը ցամքի: — Այո, ըսաւ, և մեր աշուականները վերջապէս հասկըցան ասիկայ, և ուզեցին իրենց հարստութիւնը անմեղացընել և իրենց երջանկութիւնը ամրացընել: — Ինչ ըրին ատոր համար. — Աքբերին ժողովուրդեան վրայ դարձուցին, ետքը առ Ատուած վերցընելով՝ ըսին իրենք իրենց. Օրհնք միանգամայն խոհեմութեան, արդարութեան և Ատուծոյ. տանք մեր խորհուրդներուն և հարստութիւններուն տասանորդը մեր եղբայրներուն երբոր պէտք ըլլայ, որ իրենց սիրտը իջնայ և իրենց թշուառութիւնը դէպ ի երկինք չի բողբոջ մեզի դէմ. ու մեր վայելած ատենը իրենք ալ հարստանան, կրթուին ու բարքերնին ուղղուի: Տանք ժողովուրդեան այն յոբելեանը, որ եբրայեցոց օրէնսդիրները հրէից կուտային հին օրինաց մէջ: Սիսթարենք անիկայ իր դժբաղդութեանը վրայ. հանենք անիկայ իր լքեալ վիճակէն. ներել ու սիրել տանք անոր մեր հարստութիւնները, զանոնք իր ճամբուն վրայ տարածելով, որ ժողովէ ու զմեզ չի հալածէ իր աղաղակներովը: Իսն մը ընենք, շատ բան ընենք, ամէն բան ընենք Ատուծոյ համար, որ ամէն բան ըրաւ մեզի համար: — Իայց ինչ ըրին այդ լուսաւորեալ ազնուականները, որոնց բերնէն սիրտդ ատանկ կը խօսի: — Բրածնին, մեր ըրածը, և ինչ որ անոնց հետ մէկտեղ կ'ընենք հիմայ մենք ամէնս, հարուստ ու զիւրակեաց, մեծ ու պզտիկ, ստացուածոց տէր, եկամտից տէր, վաճառական, առուտուրի մարդ, արուեստագործ և մինչև գործաւոր, ահա այս է: Իայց գիրքը աղէկ մը չի բացած՝ նորէն գոցեց: «Առաջ խօսինք, ըսաւ, այն հինգ կամ վեց մեծամեծ գործքերուն վրայ, որ միանգամայն կրօնական, ընկերական և քաղա-

բական են , և որոնցմով նշանաւոր եղաւ մեր երկրին պահպանողական ընկերականութիւնը . այն ընկերականութիւնը , որ ժողովրդեան բարձրագոյն կարգին և կառավարութեան կողմէն սկսաւ գործի դրուիլ մեր երկրին մէջ քու առաջին անգամ անիկայ տեսնալէդ 'ի վեր . . . — Ըստ ըսած գործքերդ իմ զիտցածներս են , ըսի , խօսքը կտրելով : Ետնք մէկ մէկ մեծամեծ թուականներ են արդարութեան և կամաւոր ուղղութիւններու , որ ժամանակին 'ի գործ դրուեցան՝ մարդկութեան հարստահարեալ կամ չի ձանցուած իրաւունքներուն ճայթման առջեւ առնելու համար :

„ Ընաջ կ'ուզես խօսիլ ձեր եկամբտից տուրքին վրայ , որ հասարակաց բեռերուն մասնակից ըլլալու քիչ կամ շատ հնարաւորութիւնը կը հասկընայ , և աղքատին բեռը , երբոր իր ուժէն վեր է՝ կը թեթեւցնէ . և անոր վրայէն վերցուցածը կը զարնէ անոնց վրայ , որ աւելի շահ ունին երկրին և անոր եկամուտներուն մէջ : Ըստ գործը ընկերականութիւն է և բարի , մանաւանդ անանկ երկրի մը մէջ , ուր ինչպէս հոս՝ եկամուտը տարեկան դրամագլուխի մեծութեան կը հասնի :

„ Կ'ուզես խօսիլ ձեր հիմնկուան զօրք ժողովելու կերպին վրայ , որ մերինին պէս չի ծանրանար աղքատ ընտանեաց վրայ , որուն մէկ հատիկ մանչ զաւակը ձեռքէն կ'առնեն , անանկ որ՝ ոչ տեղը ուրիշ մը կրնայ դնել , և ոչ ստակ տալով ազատել . այլ ընդհակառակն , ձեր երկրին մէջ զինուորութիւնը ազատ ու շահաւոր արհեստ մըն է , և օգտակար՝ չէ՛ թէ միայն հայրենեաց , այլ աղքատ ընտանեաց ալ , որոնց համար այս թողակը հայրենի ժառանգութեան պէս բան մը կ'ըլլայ : Ըստ ալ աղէկ , այդ ալ ընկերականութիւն է , վասն զի կենաց պայմաններու մէջ արգար իրաւունք ընել է :

„ Կ'ուզես խօսիլ ընտրութեան օրինաց մասնական ուղղութեանը վրայ , որ այս իրաւունքը հողի տէրերուն ձեռքէն

առնելով քաղաքացեաց տուաւ , ուր անաջ աւերակ մը կամ անտառ մը ունեցողը իրաւունք ունէր երեսփոխան մը ընտրելու , զոր հարիւր հազար բնակչիցով քաղաք մը չունէր : Ըստ ալ աղէկ , այս ալ ընկերականութեան սկզբնաւորութիւն մըն է , որովհետեւ ասով ազգային երեսփոխանութիւնը չէ՛ թէ հողի լծվարներուն համեմատութեամբ կ'ըլլայ , այլ ժողովրդեան բազմութեան ու բերմունքին համեմատութեամբ :

„ Կ'ուզես խօսիլ Եւրոպայի հռովմէականներուն ազատութեանը վրայ : Ըստ ալ աղէկ , այդ ալ ընկերականութիւն է , վասն զի խղճմտանքի ազատութիւն ու հաւասարութիւն է :

„ Կ'ուզես խօսիլ ձեր գերիներուն ազատութեանը և խորհրդարանին մէկ զիշերուան մէջ հինգ հարիւր միլիոնի համար քուէ տուածին վրայ , որ անով մարդկային բնութեան Եստուծոյ առջեւ ունեցած հաւասարութիւնը ծախու առնուի : Ա՛հ , հազար անգամ աղէկ , ատիկայ ընկերականութեան ալ անդին է . ատիկայ արդարութեան ու գթութեան դիւցազնութիւն մըն է : Ըստ գործը այնչափ օրհնութիւն անձրեաց , որ չի պիտի չորնան ձեր կղզիներուն վրայէն :

„ Կ'ուզես խօսիլ ձեր հիմնկու պատժական սահմանադրութեանը վրայ , որով բանտարկութեան պատուհասը՝ առանձնութեան ու մտաց փրկարար ամփոփման փոխուած է , և կառավարութեան կամ յանձնարարական ժողովներու ձեռքով սահմանուած երեք հարիւր միլիոնին վրայ , որով զնդանները վերցան , ու բանտերուն մէջ աշխատութիւն , կրթութիւն ու աղօթք հաստատուեցաւ : Ա՛աւ , այս ալ ընկերականութիւն է , որովհետեւ ասով ձեր ընկերութիւնը կը մաքրուի միջուկ իր լուալիքներուն մէջ , ուսկից բանտարկեալ մը աւելի գէշցած ու աւրուած դուրս ելլելուն տեղ , ողորմութեամբ բարեխառնեալ արդարութիւնով մը շտկուած դուրս կ'ելլէ : Տամուկէյ տարի է , որ մենք այդ ընկերական յառաջադիմու-

Թիւնը կը խնդրենք մեր երկրէն , որ այս մասին անխորհուրդ գտնուած է : Վաղաքական յանցանքի պատճառով գլխատու թիւնը յեղափոխութեան մը ատեն կրցանք վերցընել . յեղափոխութիւն մըն ալ պէտք է՝ խառն բանտարկու թիւնը և խտասիրտ եղեռնագործներուն զղջացող յանցաւորները գլխէ հանելը խափանելու համար :

„ Սուգես խօսիլ ձեր պատժական գաղթականութիւններուն վրայ , որով գացած միլիոններուն չի նայելով , ձեր ընկերութեան դիրտերը ընդարձակ երկիրներու մէջ կը խրկէք : Ար զտէք անոնք աշխատութեամբ , կը նորոգէք անոնք իրենց նոր շնչած օդովը , ընդարձակութիւն , երկիր ու կլիմայ կու տաք անոնց ու կ'ըտէք . (Ս)է որ ձեր անօրէնութիւնները քաւէք ու ձեր մոլութիւններէն սրբուիք , ձեր անունը , որ բուն հայրենիքներնուդ մէջ անարգ և գէշ ճանչցուած է , այս նոր երկրին մէջ պարծանաց անուն կ'ըլլայ ձեր զաւիրներուն : Ահա ընկերականութիւն մըն ալ . որովհետև ձեր պատժական գաղթականութիւնները ձեր ընկերութեան սպունգներն են . հոս կը մաքրեն , ուրիշ տեղ մ'ալ կոյս երկիր մը կը ջրեն : Սենք մինչև հիմայ բարբարոսական հետևողութիւն մը ըրինք այս սահմանադրութեանը : Վաղաքական յանցանքով դատապարտելոց համար զնդան մը հաստատեցինք չորս հազար փարսախ հետու ծովերուն մէջ , փոխանակ ընտանիքներ գաղթական խրկելու անանկ երկիրներու մէջ , ուր նորոգին , շատնան և այն երկիրները շէնցընեն „ :

“ Զէ , ըսաւ ընկերս խօսքս կտրելով , իմ այսօրուան քեզի բուն խօսելիքներս այս կառավարութեան մեծամեծ գործքերը չեն : Ար ճանչնամ անոնց յարգը , և կ'օրհնեմ անոնց վախճանը , անոնք ալ աստուածային ազդեցութիւններ են ժողովրդեան մը լրութեան մըտքին մէջ ծագած , և անիկայ կառավարող իշխանութիւններուն բերնովը յայտնուած ու գործի դրուած : Բայց իմ

հիմայ քեզի խօսելիքներս՝ անծանօթ , հանապազօրեայ և գրեթէ մասնաւոր գործքեր են , որ կ'ընենք թէ մեր մասնաւոր ընկերութիւններուն ու ժողովը և թէ մեր կամաւոր տուրքերովը , որ մեր մէջէն ընկերական պատերազմի պատճառները վերցընենք : Վաղէ և միանգամայն մտիկ ըրէ ընծիք բացատրութիւններս , երբոր ես այս գրքին մէջի բարերարութիւններուն յանկը կարդամ , որ ամէն մէկ երեսներուն մէջ աչքիս առջին կը պարզին „ : — Ետ աղէկ , կարգա նայիմ , ըսի , և սկսաւ կարդալ :

„ Աշխատող մարդ մը իր տառապանաց կեանքին մէջ ինչ բանէ աւելի նեղութիւն կը քաշէ : — Հիւանդութենէ , որ զինքը իր աշխատութենէն կը զրկէ , և կը թողու առանց դեղի , հազուատի , կրակի , բժշկի և շատ անգամ ալ առանց հացի իր թշուառ կնոջն ու զակրներուն մէջ : Աւտի ամենէն առաջ՝ աղքատ ժողովրդեան այս հիւանդութեան վիճակին վրայ աչքերնիս դարձուցինք : Բսանկով միայն Անտրայի հիւանդանոցներուն մէջ , որոնց ոմանք տէրութեան ծախքովը հաստատուած են ու կը նայուին , ու մեծ մասը մասնաւորաց ձեռքով հաստատուած , երեք հարիւր երեսուն հազար հիւանդի տեղ կայ , որ իրենց տանը մէջ նայուելու կարողութիւն չունեցող հիւանդներու համար է : Սարգոց զանազան հիւանդութիւններուն համար սահմանուած մասնաւոր հիւանդանոցներուն թիւը այնչափ շատ է , որչափ հիւանդութեան տեսակները : Ս երմոտներ , վիրաւորեալներ , անբուժելի հիւանդներ , քաղցկեղ , կուրութիւն , տարափոխիկ հիւանդութիւններ , որ հիւանդին ընտանեացը վտանգաւոր կրնան ըլլալ , ծիրական ախտ , օդափոխութի հիւանդանոցին ծախքովը , առ ժամանակեայ հիւանդարաններ քաղաքին այլ և այլ թաղերուն մէջ ու այլ և այլ վիճակի և արհեստի մարդոց համար սահմանուած , զինուորաց հիւանդութիւն ,

նուսաստեաց հիւանդութիւն , զործաւորաց հիւանդութիւն , խնամատուն ծննդական կանանց համար , խնամատուն ստընդիաց տղոց համար , խնամատուն ծիրական ախտով բռնուած աղջըկանց համար , խնամատուն հիւանդութենէ նոր ելլողներու համար : Հիւանդանոց օտար ազգաց համար , Վաղղիացոց , Վերմանացոց , Սպանիացոց , և Փորթուգէզներու : Նոյն բաղնիքի համար ձրի տուներ , գթութեան տուներ , մայրութեան ըսուած ձրի խնամատուններ , որք տղոց համար անթիւ ապաստանարաններ , հիւանդութեամբ բռնուած աղքատ ընտանեաց կտաւիք ու կարասիք տալու համար սահմանուած նպաստից տուներ . մարդկային ամէն տեսակ հիւանդութիւնները ձրի նայող բժշկաց տուներ , բժիշկներուն հրամայած դեղերը աղքատաց ձրի տալու համար ամէն թաղերու մէջ հաստատուած տուներ , Լոնտրայի մէջ տեղ չունեցող հիւանդ սպասաւորներն ու աղախին խնամելու համար տուներ , կանանց հիւանդութիւնները յատկապէս դարմանելու համար սահմանուած տուներ . ուրիշ տուներ տղոց հիւանդութիւններու համար , պատուաստի , ծաղիկի , լուսազարութեան համար . յատուկ տուներ աչքի հիւանդութեան , ականջի հիւանդութեան , և ուրիշ ամէն անդամներու հիւանդութեանց համար զատ զատ տուներ . անդամոց բեկութեան համար , մորթի հիւանդութիւններու համար զատ տուներ : Այս գնով տուներ անանկ կանանց համար , որ թէպէտ աղքատ չեն , բայց զիրենք խնամելու ծախքերուն միայն կէտը կամ քառորդը վճարելու կարողութիւն ունին . տուն ապաստանի ապուշներու ու խելագարներու համար և այլն : Վրբին տասնուերկու երեսը լեցուեր էր միայն Լոնտրայի գլխաւոր փողոցներուն մէջ հաստատուած անթիւ դեղարաններուն ցուցակովը , որոնք ամէն ժամանակ պատրաստ են ամէն տեսակ հիւանդութեան պէտք եղած բոլոր դեղերը ժողովրդեան

ձրի տալու : Հին Հռոյմայեցիներն հաց ու կրկէս միայն ձրի կու տային ժողովրդեան . մենք հոս խրատ , դեղ , առողջութիւն ու կեանք կու տանք ձրի :

(ԳԻՏԻ ԸՅՐՈՒՆԱԿՈՒԻ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ

Պատարարութիւն . — Բռն . — Բողջութեան պահպանութեանը վրայ քանի՛ յը վերջին աղքատարարութիւններ :

ԲՄԵՆ տեղի օրէնսդիրներն ալ մեծ հոգ ունեցած են տղոց դաստիարակութեանը վրայ , որդեակք , ամէնքն ալ հասկըցած են որ հայրենեաց օգուտը կամ վնասը անկէց կախուած են . և որովհետեւ ամէն բարեաց աղբիւր Բստուած է , անոր համար ամէն տեսակ օրինաց գրքերուն սկիզբը Բստուծոյանունը գրած են : Պուք ալ գիտէք թէ որչափ հոգ կ'ընէին տղոց վրայ Եգիպտացիք , Պարսիկները և Յունաստանի ժողովրդոց մեծ մասը : Բմէն բանէ առաջ Բստուծոյ վախը , հայրենեաց սէրը և ծերոց պատկառանքը կը սորվեցընէին անոնց . անկէց ետքը ուսմունքը կը սորվեցընէին իբրև օգտակար բան մը . բայց ամէն մարդու ալ ամենահարկաւոր չէին ճանչնար : Եամանակը , խռովութիւնները , և մանաւանդ զեղխութիւնը , որ ամէն տեսակ ապականութեանց աղբիւր է , կամաց կամաց փճացուցին բոլոր անբարեկարգութիւնները , որ հին ատենի ժողովրդոց պարծանք ու հաստատութիւն էին . բայց անոնց տեղը ձըլմարտութեան վրայ հիմնուած այնպիսի անբակտելի շէնք մը շինուեցաւ՝ որուն մէջ ամէն երկրի տղաքն ալ պիտի աճին՝ աւելի հաստատուն առաքինութիւններով ու աւելի անկորուստ փառքով : Բ շէնքը , որ ոչ երբէք պիտի